Զգենու մեծ — վայելչութիւն
Եւ զօրութիւն ի բարիս,
Ուրախ լինի յաւուրս յետին
Ցիւր վաստակոց ի քրտինս։

Պարկեշտ են մուտ, ուղիղ և ել
Ճանապարհաց տան Նորա,
Հաց դատարկութեան նա ոչ եկեր,
Շահեցաւ կեանս ձեռք Նորա։

Ողորմածութիւնքն յաղքատս
Կանգնեն զորդիս իւր կարօտ,
Եւ մեծ առնեն զնա և զնորայն
Առաջի Տեառն և մարդկան։

Երևելի է այր Նորա
Ի դրունս, յորժամ նստիցի
Ի ժողովրդեան ի մէջ ծերոց,
Եւ ընակչաց իւր երկրի։

Գովէ ասէ այրն ցկինն —
Բազում դստերք ստացան
Զմեծութիւն, և բազումք են
Որք արարին զօրութիւն։

Բայց դու եղեր մեծ ի դստերս,
Մեծ ի կանայս առաւել,
Եւ անցուցեր դու զանցուցեր
Զամենեքումբք գերիվեր։

Սուտ հաճութիւնք ընդունայն գեղ
Կնոջ՝ ի քեզ ոչ գոյ արդ,
Զի օրհնեսցի կին հանճարեղ
Իմաստուն և բարեպաշտ։

Զերկիւղածս պատուեսցէ Տեառն
Տո՛ւք որ առնուքդ, տո՛ւք նմա,
Տուք ի պտղոյ շրթանց Նորա,
Գովի ի դրունս այր Նորա։

Զի ճանապարհք առնն երթիցեն
Իւր երեսաց առաջի,
Եւ ի բարիս աջողեսցին
Գնացք ոտիցն յաշխարհի։

Սամուէլ Գիւլզադեանց

---

## ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ.

Ատրախանի Կոնսիստորիայն 1050 ի 28 Յունիսի տարւոյս գրած է խմբագրութեանս հրատարակել, որ այլ և ս Ատրախանի եկեղեցիք չունին աւելորդ զարդեր և սպասներ միւս վիճակաց կամ Պարսկաստանի եկեղեցիաց ուղարկելու, թող այսուհետև չդիմեն Ատրախանի եկեղեցիաց կամ Կոնսիստորիային. նոցա խնդրագրերն կը մնան անպատասխանի և առանց հետևանաց։

---

Աւագիկայ Օգոստոս 1/20 Յուլիսի, ԱՐՄԷՆԻԱ անուն հայերէն մի լրագիր պիտի հրատարակուի Մարսէյլի մէջ, շաբաթն երկու անգամ, համարատուութեամբ Ֆիլիքս Անֆանդէնի և խմբագրութեամբ Մ. Փորթուգալեանի, տարեկան բաժանորդագինն է 10 ր. թղթատրամ։ Խմբագրութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։

ԱՐՄԷՆԻԱՒ շրջաբերական յայտարարութիւնը Յրիտոպէ կը դրկուի եթէ ցանկացող լինի իմանալու այդ լրագրի նպատակը, ուղղութիւնը և պայմանները։ Կարելի է դիմել խմբագրութեանը, ֆրանսերէն հետևեալ հասցէով. M. Portoukalian, Rédacteur du journal ARMENIE, rue Arménie, 2 (Hôtel Forer), MARSEILLE (France),

---

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.